



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ
ՀԻՄՆԻՍԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՄՍՏԵԱՆ ԹԵՄԻ
WESTERN PRELACY
OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA
H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE
Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745
E-mail: Prelacy@aol.com Website: www.westernprelacy.org



ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ ՈՏԵԼՈՒՄՅԻ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆԸ ԿԱՏԱՐԵՑ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑՒՅՑ ՄԷՋ

Աւագ Շաբթուան Հինգշաբթին մեր եկեղեցւոյ արարողական կեանքի ամենէն խորհրդաւոր եւ նուիրական օրն է. Ս. Հաղորդութեան խորհուրդի հաստատում, ՈՊտնլւոյ եւ կարգ խաւարման: Ինչպէս ծանօթ է, իր մատնութենէն քանի մը ժամ առաջ, Յիսուս վերնատան մէջ իր աշակերտներուն հետ ունեցաւ վերջին ընթրիքը, որուն ընթացքին մեծ օրինակ տուաւ՝ անոնց առջեւ խոնարհելով ու անոնց ոտքերը լուալով:

Հինգշաբթի օր, մեր Թեմի բոլոր եկեղեցիներուն մէջ տեղի ունեցաւ Ս. Հաղորդութեան Պատարագ, իսկ յետմիջօրէին, Ոտնլւոյի արարողութիւն, որուն ընթացքին, մեր հոգեւոր հայրերը հետեւեցան Քրիստոսի օրինակին ու կատարեցին դպիրներու ոտքերու լուացում:

Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեան Ոտնլւոյի արարողութիւն կատարեց Կլենտէյլի Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ: Այս առիթով իր արտասանած քարոզին մէջ, ան պատգամեց, որ քրիստոնէայ հաւատացեալը պարտի հետեւիլ Աստուածորդուն հեզութեան, խոնարհութեան ու ծառայասիրութեան օրինակին: Ան շեշտեց, որ Յիսուս, Աստուածորդի ըլլալով հանդերձ, չունէր իշխողի ու հրամայողի ընթացք, այլ խոնարհ էր ու հեզահամբոյր, գիտակից՝ մարդուն մեղքերու քաւութեան համար զոհաբերուելու իր առաքելութեան: Ան ծանօթ էր մինչեւ իսկ Յուդայի կատարելիք մատնութեան, սակայն զայն չզրկեց իր այս ծառայութենէն, անոր բաժին հանելով իր մարմինը խորհրդանշող գինեթաթախի հացէն:

ԽԱՒԱՐՈՒՄ

Աւելի ուշ, Առաջնորդ Սրբազանը Էնսիւնյի Ս. Նահատակաց եկեղեցւոյ մէջ հանդիսապետեց Խաւարման գիշերի արարողութեան, յիշատակելով Յիսուսի մատնութեան ու ձերբակալութեան դէպքը եւ տուաւ իր պատգամը:

MAUNDY THURSDAY COMMEMORATIONS

On Thursday, March 20th, Maundy Thursday services took place in Prelacy churches beginning with Divine Liturgy in the morning, followed by the Washing of the Feet service in the afternoon where clergy members conducted the ceremony of the Washing of the Feet to commemorate the humility of our Lord Jesus Christ during the Last Supper.

H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, conducted the service at St. Mary's Church in Glendale and delivered the sermon in which he exhorted that all faithful Christians must follow in the example set by Christ of humility and service. He asserted that although He was the Son of God, He remained humble and mindful of the fact that He was sent on a mission to redeem the sins of mankind and did not even deprive Judas, who would later betray Him, of participating in His ministry.

In the evening, the Prelate conducted the solemn vigil service and delivered the sermon at Holy Martyrs Church in Encino during which the betrayal and arrest of Jesus Christ was commemorated.